Դաւիթ էլաւ, կինաց ուր տուն։

Էսաց.—Խրօխպէր, մէկ սօլ էլ տուի՞ր իս կարիլ, որ խագնիմ, տաւար տանիմ։

Էսաց.—Ո՛րտի, քիւ նախրի հախ առնիմ տամ, անջախ ջուխտ ըմ սօլ էլ տամ կարիլ. որ էդենց տ'էնիս, նեա[1]) նախրի խիտ կի-նա, նեա քիզ էլ սօլ ըմ տամ կարիլ. խլիսուն զքի տ'էնիմ գեառ-նարած, տիւ չըս կերի նախրչուլթին էնը։

Խլիսուն էլաւ, կինաց բարուշաւ [2]). գեառնիր ժողվից, իտի Դաւիթի խիտ։

Խլիսուն էլաւ, առից, կինաց սար. սար որ տարաւ, խասը-ցուց, խրօխպէր էսաց.—Իս ճաշուցին խաց կ'առնիմ, կ'կեամ։

Դաւիթ էլաւ զգեառնիր քիշից, տարաւ, էխան սար. գեառ-նիր էնդեղ մնացին։ Էտուր ոտաց ձէն որ էլաւ, քեանի մ' որ էդա սար ու ձիւր[3]) լպստրակ կէր, աղուիս կէր, կուզ[4]) կէր, կոռոբաշ[5]) կէր, բիրադի օխտ սարը դէն ժողվից, իլից մեանչ գեառնիրուն. որ իլից մեանչ գեառնիրուն՝ շատ էլ նեղացաւ. տեսաւ՝ էն եա-նէն խրօխպէր խաց առից, իրի։

Էսաց.—Դաւիթ, քիւ հալ ի՞նչիս ի, գեառնիրու խիտ ճամ-բախ կէրի՞ս էրթաս։

—Խրօխպէր, էսաց, կարմիր գեառներու խիտ, էդա սիւ ու-լիրու խիտ լաւ ճամբախ կ'երթամ, համա մէկիլնիրու խիտ, էդա բոզ ուլիր, սըւտակ ուլիր, էդա յերկէնականջ ուլիր զիմ խոգին անկիրող առին, էնքան ձի կ'չարչըրին։

Էսաց.—Զա՛ր, զար, խրատը՛։

Ինչ լպստրակնիր, աղուիսնիր կ'փախին, գեառներուց կ'ըլնին, մէկ սպնդրի ծառ ինչ կ'զարկի, կեախ[6]) ըմ քսան, իրսուն շուռ կ'տայ գետրն։

Էսաց.—Էրըծա՛ չուր յիրիկուն, յիրիկուն ա՛ռ, բի՛ տուն։

---

[1]) Ոչ։ [2]) Համաձայնել, պայման կապել, հաշտուել։ [3]) Զոր։ [4]) Աղուեսանման մի կենդանի։ [5]) Աղնիւ մորթով մի կենդանի։ [6]) Անգամ։